թեամբ միանում է Զերմեսին ձախ ափից։ Կուրտ առ. անցնելով Բեսերչի եւ Սարխան լ–րի միջով, սրանց լանջերն ու ստորոտ–ներն է ոռոգում իր բազմաթիւ առուներով, որոնք տարածուած են արեւելքից արեւ–մուտք. Բաշկուրդ, Սըգըզընդան, Ջէհեն–դուր, Փաշաքի, Գիւլիզա եւ Գեօկ գիւղերը։ Կուրդ առ. ձախից ընդունում է Զանզալար առ–ը, որը ոռոգում է Զազա, Դենչիկ, Ջե–ռինք, Գենէյդ, Փերինէ եւ միւս ճիւղերով Զանզալար եւ ապա միանալով անցնում են Զանզալար խանից, Ակերնիս, Կալաջըկ (աւե–րակ) եւ Էշքի–Ալմա գեղերից։ Զանզա եւ Զանզալար առ–ները բղխում են Ադ եւ Կե–տար եայլա լչ–ներից։ Կուրդ ջուրն են թափւում նոյնպէս Բեսերչի լ–րից իջնող Սօգիւդլի եւ Կոթանիս առուները։ Բոլոր առուները ոռոգում են համանուն գեղերը։

Մասսաթի ջուրը դէպի արեւմուտք ուղղուելով՝ ընդունում է ձախից Գեչի–Թե–բեսի առ–ը, որ իջնում է Ջիջի եւ Բեօյ–Դա–ղից եւ ոռոգում է Սիլինսագալ, Հալվալի, Զախարլի, Փիրնեփէ, Զամագեօլ գեղերը, որոնք շատ աղքատ վիճակ ունին։ Այստեղ էլ հնութեան ճոխութիւնն ու աւերակներն անպակաս են։ Աւելի արեւմուտք խառնւում է ձախից Մասսաթին Ավող առուակը, որ ո–ռոգում է համանուն գեղը։ Ապա Մասսաթին խառնւում է Կալա առ–ը, որ իջնում է Կոփ լ–րից եւ ոռոգում է Գերմաշիք–խանի, Փա–